

Թռչունների ժանտախտ

Թռչունների ժանտախտը խիստ վարակիչ և մեծ կորուստներ պատճառող համաճարակային հիվանդություն է: Տարբերվում է եվրոպական կամ դասական ժանտախտ և ասիական կամ կեղծ ժանտախտ: Հարուցիչը քամվող վիրուս է: Մեծ քանակությամբ գտնվում է հիվանդ թռչունի արյան մեջ և բոլոր օրգաններում ու առատորեն արտազատվում է: Թռչունների դասական ժանտախտը (թռչունների գրիպ) բնորոշվում է ստամոքսաաղիքային համակարգի լորձաթաղանթի բորբոքամեռուկային ախտահարումով, դեզներատիվ փոփոխություններով և հավերի ընտանիքի բոլոր տարիքի թռչունների անկման բարձր տոկոսով: Հարուցիչը օրթոմիք վիրուսների խմբի վիրուսն է: Հիվանդանում են հավերը, հնդկահավերը, ինչպես նաև բադերը և սագերը, վայրի թռչուններից՝ ճնճուկը, թութակը, կաքավը:

Ասիական կամ կեղծ ժանտախտ

Արագ տարածվող վիրուսային հիվանդություն է, որը ընթանում է շնչառական և մարսողական ուղիների ու կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումներով: Հարուցիչը վիրուս է (H5), որը չափազանց վիրուլենտ է և դիմացկուն միջավայրին:

Վիրուսը թռչանոցներում կենսունակ է մնում մինչև 8 ամիս: Ցածր ջերմության պայմաններում չորացնելիս տևական ժամանակ պահպանվում է (սառեցրած մտում պահպանվում է ավելի քան 6 ամիս): Համեմատաբար անկայուն է բարձր ջերմաստիճանի նկատմամբ: 55-75°C-ում ոչնչանում է 30 րոպեում, իսկ արևի ուղիղ ճառագայթների ազդեցություններից՝ 2-3 օրում: Կերանյութերի մեջ կենսունակ է մնում մինչև 30-45, ձվի կեղևում՝ 20, իսկ ջրում՝ 10-15 օր:

Վարակի աղբյուրները և վարակումը

Վարակի հիմնական աղբյուրը հիվանդ թռչուններն են, նրանց միսը, ձուն և փետուրները: Վարակվում են անմիջական շփման միջոցով, ինչպես նաև շրջապատի վարակված նյութերից և առարկաներից՝ ալիմենտար: Հիվանդությունն ապահով տնտեսություն է ներխուժում հիվանդ կամ վիրուսակիր թռչունների

միջոցով: Հիվանդությունը համաճարակային բնույթ ունի և տարածվում է տարվա բոլոր եղանակներին:

Նշանները

Գաղտնի շրջանը 2-14 օր է, առավելագույն՝ 20 օր: Ընթացքը շանթահար է, սուր և ասիպիկ:

Շանթահար ձևով հիվանդանում են ճտերը, որոնք ազոնիայի երևույթներով արագ սատկում են: Հիվանդ թռչունի ջերմությունը բարձրանում է 43-44°C:

Սուր ընթացքի դեպքում թմրած է, հաճախ նստում կամ կանգնում է կախ գցած թներով: Նկատվում է թարախային կոնյուկտիվիտ, բրոնխիտ, քթից և բերանից հոսում է առատ լորձունք, թռչունը փակ աչքերով կտուցը գետնին հենած տևական ժամանակ կանգնում է, խիստ դժվարանում է շնչառությունը, խոպոտ ձայն է հանում, կատարը և մրուքը կապտանում են, լուծում է: Հիվանդությունը տևում է 1-3 օր: Մահացությունը հասնում է մինչև 80-90%-ի:

Ատիպիկ ձևով հիվանդանում են հասակավոր թռչունները, այս դեպքում նկատվում են կարճատև ընկճվածություն, ռինիտ և ձվատվության նվազում:

Դիաֆերձման ժամանակ կերակրափողի և աղեփողի լորձաթաղանթների վրա նկատվում են կետային արյունազեղումներ, իսկ երբեմն էլ՝ խոցային ախտահարումներ:

Ախտորոշումը

Ախտորոշում են էպիզոտոլգիական, կլինիկական, ախտաբանական-անատոմիական և լաբորատոր հետազոտության տվյալներով: Ժանտախտի ժամանակ գլխի, վզի և կրծքի հատվածներում լինում են այտուցներ:

Միջոցառումները և պրոֆիլակտիկան

Թռչնանոցներում կիրառվում են բոլոր գոռհիզենիկ կանոնները: Նրանցում եղած գույքը մաքրում և ախտահանում են: Կանխում են անապահով

տնտեսություններից թռչունների ներմուծումը, նոր բերված թռչուններին՝ պահում պրոֆիլակտիկ կարանտինում: Արգելում են թռչունների և նրանցից ստացվող հումույթի, մթերքի վաճառքը և տեղափոխությունը: Հիվանդ և կասկածելի թռչուններին փետուրների և աղվամազի հետ այրում են:

Սպառնալիքի ենթակա տնտեսություններում թռչուններին ձվատվության շրջանում իմունացնում են միանվագ, ներարկելով պատվաստանյութը կրծքի մկանների մեջ 1մլ դոզայով:

Մինչև 2 ամսական ճտերին պատվաստում են երկնվագ՝ 7-10 օր ընդմիջումով՝ 0.5մլ, 2 ամսականից հետո նրանցնույն դոզայով կրկին վակցինացնում են:

Անապահով տնտեսություններում ակտիվ իմունացնում են տարին մեկ անգամ՝ օգտագործելով վիրուս վակցինա կամ էմբրիոն ֆորմով հիդրօքսիդ ալյումինային վակցինա: Թույլատրվում է օգտագործել B1 չոր վիրուս վակցինա: Մրանով իմունացնում են թռչուններին՝ սկսած մեկ օրական հասակից: Վակցինան լուծելուց հետո կաթեցնում են քթի մեջ կամ տալիս են խմելու ջրի հետ:

Մինչև մեկ ամսական ճտերին 2.5-3 ամսից հետո ենթարկում են ռևակցինացիայի:

Ախտահանության համար օգտագործում են 1.5% կծու նատրիումի, 3% ակտիվ քլոր պարունակող քլորակրի լուծույթներ: